ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՌՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2022-2023 ուստարում ՀՀ Լոռու մարզի Ուռուտի միջնակարգ դպրոցն առաջնորդվել է հանրակրթական պետական չափորոշիչով, առարկայական ծրագրերով,հաստատված թեմատիկ պլաններով,մանկավարժական անձնակազմի աշխատանքային պլաններով:
2022-2023 ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 12 /տասներկու/ դասարան՝ 149 /հարյուր քառասունինը/ աշակերտով.

1. I դաս. 14 աշակերտ
2. II դաս. 13 աշակերտ
3. III դաս. 16 աշակերտ
4. IV դաս. 12 աշակերտ
5. V դաս. 15 աշակերտ
6. VI դաս. 13 աշակերտ
7. VII դաս. 14 աշակերտ
8. VIII դաս. 13 աշակերտ
9. IX դաս. 13 աշակերտ
10. X դաս. 8 աշակերտ
11. XI դաս. 9 աշակերտ
12. XII դաս. 9 աշակերտ

Ուսումնական տարվա ընթացքում աշակերտների շարժն այսպիսին է՝ այլ ուսումնական հաստատություններ են տեղափոխվել 3 աշակերտ՝2-րդ/ երկրորդ/, 8-րդ/ութերորդ/ և 6-րդ /վեցերորդ/ դասարաններից. 1/մեկ/ աշակերտ ընդունվել է դպրոց՝ 10-րդ դասարան:2022-2023 ուստարվա ավարտին ունենք դպրոցում սովորող 147/հարյուր քառասունյոթ/ աշակերտ:Դպրոցում գործում է լիցենզավորված նախակրթարան, որտեղ հաճախում են 7 /յոթ / սաներ:
2022թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին դպրոցի 10/ տասը/ ուսուցիչներ մասնակցել են <<Ինտերակտիվ կրթության զարգացում>> կազմակերպության կողմից կազմակերպված նախաատեստացիոն դասընթացներին,իսկ ուստարվա ավարտին դպրոցի տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և ողջ մանկավարժական անձնակազմը անցել են վերապատրաստում՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Անահիտ Զաքարյանը մանրակրկիտ վերլուծել է ուսումնական աշխատանքները, ներկայացրել է հաշվետվություն , որտեղ արտացոլված են կատարված բոլոր աշխատանքները.

Անահիտ Զաքարյանը հետևողական աշխատանք է իրականացրել ողջ ուսումնական տարվա ընթացքում.ժամանակին կազմվել և մուտքագրվել է դասացուցակը,քննարկվել և սահմանված կարգով հաստատվել են թեմատիկ պլանները, աշխատանքային տարեկան պլանները,ժամատախտակը, հերթապահությունը, նախորդ ուսումնական տարվա հաշվետվությունները, ներքին գնահատումը և տեղադրվել պազշարների շտեմարանում…

Նրա ուշադրության կենտրոնում է եղել ուսումնական առարկաների դասավանդումը, ստուգվել են օրվա պլանները, ժամանակակից պահանջներին համապատասխան դասին ներկայանալը, օգտագործված դիդակտիկ պարագաները,: Կազմակերպվել են բաց դասեր, քննարկումներ, տրվել են համապատասխան ցուցումներ, կատարվել եզրակացություններ : Ա. Զաքարյանը ղեկավարել է մ/մ աշխատանքները, վերահսկել ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքները, եղել հետևողական ՝ տեղ գտած բացթողումներն ու թերութունները շտկելու առումով…

Անհրաժեշտություն եմ համարում ներկայացնել դպրոցի մաթեմատիկայի, ինֆորմատիկայի ուսուցչուհի, դպրոցի օպերատոր Հեղինե Այվազյանի աշխատանքը. աշխատանք, որն իր պատասխանատվությամբ և հսկայական ծավալով անգնահատելի է…Բանիմաց և հմուտ ուսուցչուհին պատրաստակամ օգնել է իր բոլոր գործընկերներին՝ թեմատիկ պլաններ կազմելու, էլ. մատյաններում դրանք ներբեռնելու, էլ.մատյանները լրացնելու, ինչպես նաև տեղ գտած թերությունները շտկելու աշխատանքներում: Հեղինե Այվազյանի շնորհիվ դպրոցի կայքում, ԴԿՏՀ, ԴՇՀ համակարգերում ժամանակին կատարվել են անհրաժեշտ բոլոր մուտքագրումները …

Ուսումնական տարվա ընթացքում Հեղինե Այվազյանն իրականացրել է նախագծային աշխատանք՝ <<Երիտասարդներն ընդդեմ կլիմայի փոփոխության>> թեմայով, աշխատանք, որն աչքի է ընկնում իր արդիականությամբ, հրատապությամբ , բազմակողմանի ներգրավվածությամբ և որակով…

Նախորդ ուսումնական տարիների նման՝ այս ուսումնական տարում ևս հ.լ.-ի և գր . ուսուցչուհի Բավական Այվազյանն իր կատարած աշխատանքով անկրկնելի էր.նրա կողմից կազմակերպված և իրականացված շուրջ 20/քսան / միջոցառումներն ու բաց դասրն աչքի են ընկնում գեղագիտական բարձր ճաշակով, հետաքրքրությամբ, յուրօրինակությամբ և երբեք չկրկնվելու ուղղորդվածությամբ; Այս միջոցառումները յուրատեսակ կերպով դարձել են համադպրոցական՝տարբեր դասարանների մեծ թվով աշակերտների ընդգրկվածությամբ, հայրենասիրական և էսթետիկական դաստիարակությամբ՝ դաստիարակչական բարձր մակարդակով…

Ուսումնական տարվա ավարտին սահմանված կարգով իրականացվել են նաև նպատակային էքսկուրսիաներ:

2022-2023 ուստարվա ավարտին դպրոցի մանկավարժական աշխատողները ներկայացրել են իրենց տարեկան աշխատանքների հաշվետվությունները, որոնք քննարկվել են մանկավարժական խորհրդի նիստում, վեր հանվել թերությունների, բացթողումների պատճառները՝ գալիք ուստարում դրանք բացառելու ակնկալիքով…

ՀՀ Լոռու մարզի Ուռուտի մ/դ տնօրեն /Անուշ Օհանյան/

2022-2023 ուստարվա ավարտին դպրոցի մանկավարժական աշխատողները ներկայացրել են իրենց տարեկան աշխատանքների հաշվետվությունները, որոնք քննարկվել են մանկավարժական խորհրդի նիստում, վեր հանվել թերությունների, բացթողումների պատճառները՝ գալիք ուստարում դրանք բացառելու ակնկալիքով…

ՀՀ Լոռու մարզի Ուռուտի մ/դ տնօրեն /Անուշ Օհանյան/